# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15-Ն

«19» ապրիլի 2018 թվական գյուղ Մայիսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 16-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 16-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Ուժը կորցրած ճանաչել որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 7-րդ մասը:

2.Որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

7.Աղբի տարբեր տեսակների համար կարող են սահմանվել ստորև ներկայացվող տարբեր դրույքաչափերը՝ հաշվի առնելով աղբի գոյացման վայրի (անշարժ գույքի) նպատակային կամ գործառնական նշանակությունը:

1)Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահամանվում է.

ա.ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական մեկ հարյուր դրամ, կամ

բ.ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տաս դրամ:

2)Համայնքներում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման,

արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա.առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ մեկ հարյուր դրամ,

բ.հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն դրամ,

գ.արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ՝տաս դրամ.

դ.կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար տաս դրամ:

ե.շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել առավել բարձր դրույքաչափով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մայիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՆՈՒԿ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ_____

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ_____

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՄԼԵՏ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ _____

ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ_____

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԼԵՎՈՆ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ_____

ՂԱՖԱՐՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ_____

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ_____

ՍԱՀԱԿՅԱՆ ՊԵՏՐՈՍ Կողմ _____ Դեմ_____ Չեռնպահ_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

« 19 » ապրիլի 2018 թվական
գյուղ Մայիսյան